

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՃՇՏՈՒՄՆԵՐ

1. Լ. Թումանյանի «Երկարուղու շինությունը» պատմվածքի
ստեղծագործական պատմությունը

Հովհաննես Թումանյանի «Երկարուղու շինությունը» փոքրիկ պատմվածքը նրա զեղարվեստական արձակի լավագույն էջերից է, որն այնքան սեղմ, բայց դիպուկ և տպավորիչ գծերով վերարտադրում է նահապետական գյուղի յայքայումը, տեխնիկայի հետ նոր հարաբերությունների և բմրուսումների թափանցումն այնտեղ, գյուղացու զօրհանությունն ու բողոքը։ Սակայն այդ շատ կարևոր պատմվածքի հետ կապված մի քանի հարցեր մինչև այժմ մնում են չպարզաբանված։

Սկսենք պատմվածքի գրության թվականից։ Այդ մասին տարբեր տվյալներ են հաղորդվում։ Թումանյանի երկերի ակադեմիական հրատարակության երրորդ հատորի ծանոթագրություններում ասվում է, որ պատմվածքի «գրության տարեթիվն անհայտ է» (էջ 492), թեև այն դասվում է 1908 թ. գրված գործերի շարքում («Հասկեր» ամսագրում առաջին տպագրության թվականը)։ Այդ թվականն ընդունված է նաև Թումանյանի մի քանի ուրիշ հայերեն և ռուսերեն ժողովածուներում (այդ թվում և 1934 թ. Ե. Չարենցի խմբագրությամբ լույս տեսած «Գեղարվեստական երկերում»)։ Բայց մի շարք ուրիշ գրքերում (օրինակ՝ «Երկեր. մի հատորյակ», 1938, կամ ռուսերեն ամենավերջին ժողովածուն՝ «Избранные произведения в двух томах», М., Гослитиздат, 1960) պատմվածքի գրության ժամանակը մի ամբողջ տասնամյակով ետ է տարվում մինչև 1898 թ.։ Թեև առանց որևէ հիմնավորման։

Բրականում և՛ մեկ, և՛ մյուս թվականը հիմնավոր չէ։ Բանասիրության մեջ մինչև այժմ մոռացության է տրվել այն փաստը, որ «Երկարուղու շինությունը» առաջին անգամ տպագրվել է դեռ 1897 թ.։ Ըիշտ է, դա ոչ թե պատմվածքի հայերեն բնագիրն էր, այլ նրա ձևազրից կատարված ռուսերեն թարգմանությունը, որը լույս տեսավ Թիֆլիսի «Новое обозрение» թերթում 1897 թ. մայիսի 13-ի համարում, «Накануне» վերնագրով։ Հետևաբար, պատմվածքն սկզբնապես կոչվել է «նախօրին» և գրված է եղել 1897-ին, գուցե և ավելի վաղ, քանի որ այդ տարեթիվում խոսվում է 1895 թ. դեպքերի մասին, երբ նոր էր սկսվել Թիֆլիս—Կարս երկաթուղու շինարարությունը։

Սակայն գրության թվականից ավելի կարևոր է պատմվածքի նախնական տարբերակի բովանդակությունը։ Ամենից առաջ, այն ցույց է տալիս, որ երկարուղու կառուցման հետ կապված սոցիալ-հոգևորական հարցերին Թումանյանն անդրադարձել է ոչ թե շինարարությունից մի ամբողջ տասնամյակ անց (ինչպես պիտի ասեինք, եթե իբրև պատմվածքի գրության թվական ընդունեինք 1908-ը), այլ հենց այն օրերին, երբ տեղի էր ունենում այդ շինարարությունը։ Թումանյանն ընթանում էր, ինչպես ասում են, դեպքերի «թարմ հետքերով», և դա շատ բնորոշ է նրա «եռալիզմի» համար, որն արդեն 90-ական թթ. կեսերին ձևավորվեց նրա ստեղծագործության մեջ և առաջին հերթին՝ զեղարվեստական արձակում։

Եվ ապա. նախնական տարբերակը, հանրահայտ տեքստի համեմատությամբ, զգալիորեն ավելի մեծ է և պարունակում է մի շարք հետաքրքիր հատվածներ, որոնք հետագայում հանվել են։ Այստեղ գյուղացիներն ավելի ման-

րամասն են խոսում երկաթուղու հետ գյուղ մտնող տնտեսական փոփոխությունների մասին, բերում են կոնկրետ փաստեր (օրինակ՝ գյուղացի Արթինի պատմությունը)։ Ավելի շատ են բնության եղծման մասին արվող դատողությունները։ Ամբողջ պատմվածքում զգացվում է պատմող-հեղինակի ներկայությունը, նրա մասնակցությունը գյուղացիների վեճին. սա նույնպես բացակայում է վերջնական տարրերակում։ Այլ են նաև հերոսների անունները։

1897 թ. տարրերակում երկաթուղու մասին գեռ խոսվում է իբրև առաջիկայում մուտք գործող մի բանի, իսկ 1908 թ. տպագրված պատմվածքում գյուղացիներն արդեն տեսել են, գիտեն, թե ի՞նչ է երկաթուղին և ի՞նչ է բերում իր հետ։

Ըստ երևույթին, կատարված կրճատումների մի մասը կապված էր այն բանի հետ, որ «Երկաթուղու շինությունը» հայերեն տառիչ անգամ տպագրվեց «Հասկեր» մանկական ամսագրում, և Թումանյանը խուսափել է մանուկ բնթերյուղի ուղադրությունը սոցիալ-տնտեսական բնույթի խոսակցություններով շատ դրազեցնելուց։

«Նախօրին» պատմվածքը, որը Թումանյանի արձակից առաջինն է թարգմանվել ռուսերեն, ըստ երևույթին լավ ընդունելություն է գտել։ Դրա վկայություններից մեկը բանաստեղծի ընկերներից Զալալ Տեր-Գրիգորյանի 1897 թ. մայիսի 30-ի նամակն է Թումանյանին, որի մեջ նա պատմվածքը անվանում է «գեղեցիկ պատկեր» և բացականչում՝ «կեցցե՛ս» (տե՛ս գրականության և արվեստի թանգարան, Թումանյանի ֆոնդ, N° 1145)։

Թումանյանի պատմվածքի նախնական տարրերակը կարևոր էջ է նրա ստեղծագործական կենսագրության մեջ, որը, սակայն, երկար տարիներ բոլորովին գուրս է մնացել գրականագիտության տեսագաշտից։ Ստորև հրապարակում ենք պատմվածքի ռուսերեն թարգմանությունը, որը տվյալ զեպում մեզ համար բնագրի նշանակություն ունի (ոչ այդ, ոչ էլ վերջնական տարրերակի ձևադրերը չեն պահպանվել)։

Н А К А Н У Н Е*

Лето 1895 года я провел в лорийских горах. В это время только что начались работы по проведению тифлисско-карсской железнодорожной линии, и рабочие так и кишели в Лорийском ущелье.

Дело было под вечер. У порога дома дяди Ованеса, сидя на бревнах, беседовало несколько сельчан. Разговор шел о строящейся железной дороге, о том, для чего она строится, пользу или вред она сулит сельчанам, во что она обойдется, как начались работы и т. п. Дядя Несо стал рассказывать, когда и как начались работы по постройке.

— Раз я и наш Мадо выходим из лесу на поляну. Вдруг видим, внизу, в ущелье, показались несколько человек в белых картузах; они стали подыматься все вверх да вверх, по реке. Я сразу же узнал, что это планщики.

— Эй, говорю, Мадо!

— Что такое?

— Тут, говорю, что-то неладно!

* Перевод с рукописи.

— Чего неладно: чужестранцы должно, заблудились,— вот и идут себе.

— Нет, говорю, тут что-то неладно. А вот увидишь!

Идем это мы и видим, что на крыше-то мельницы какой-то белый шест торчит.

— Эй, говорю. Мадо!

— Что? — спрашивает он.

— Что, говорю, теперь видишь?

— А что такое?

— А вот, говорю, погоди немного — увидишь!

И вправду: не прошло этак несколько дней, как пришла газета, что, мол, железную дорогу к нам ведут.

— Эй, говорю, Мадо!

— А что?

— Как, говорю, что? Не сказывал разве я тебе намерения?

— Что же тут плохого, что машину-то сюда ведут? — обратился я к дяде Несо.

— Как что плохо? Да все плохо.

— Да что же именно плохо по-твоему? — настаивал я.

— Да все по-новому пойдет, и все не впрок!

— Почему же не впрок? Напротив, больше просвещения будет.

— Знаешь что, любезный? Все-то наше прахом пойдет, а затем-то просвещение будет или что другое — это уж в толк не возьму.

— А что ж, по-твоему — впрок что ли? — вмешался в наш разговор, обращаясь ко мне, один из поодаль сидевших сельчан. — До сих пор на своей-то лошадке я извозом занимался да кур и яйца в город возил и дом содержал, а теперь что мне прикажешь делать?

— Что ж, — ответил я ему, — и теперь вози! Теперь даже ближе — далеко незачем возить: на станции продашь!

— Как не возить?! Да только, примерно сказать, кроме меня-то вот и кум Лука возит, и Фадей возит, и Матвей возит...

— Оно и лучше, — продолжал я, — прежде, пользуясь лошадкой, один яйца возил в город продавать, а теперь всякий будет продавать...

— Хорошо-то хорошо ты говоришь, — возражал мой противник, — а ты знаешь ли что? Вот у моего соседа Артина одна корова да пять кур; так он теперь и молоко продает, и яйца продает; да еще рассказывают, что, мол, молоко-то водицей разбавляет. А дома-то больной отец выпучил глаза на потолок да и ждет, ничего не дождется: Артин-то домашних ячменем кормит, а пшеницу-то дорожным рабочим продает. Вот ты и поди!

Не успел я еще ответить, как в наш разговор вмешался и третий.

— А знаете что, братцы, как эта самая машина придет к нам да зашвистит, так у нас в горах ни дичи не останется, ни зверей: все от свиста разбегутся...

— Не только дичь да звери, а я и сам пропаду, — отозвался высоко-рослый пастух. — Вот видит бог, — продолжал он, — как со скалы взгля-

ну вниз да бросятся мне в глаза те домики с красными крышами, так вот и защемит сердце. Как увижу, как увижу, как те скалы переворачивают да ломают, так мне и кажется, будто евреи Христа мучают.

— Да что и говорить: конечно, хуже будет! — со вздохом отозвались со всех сторон.

В это время один из рабочих по постройке поднялся к нам из ущелья. Поздоровавшись, он обратился ко всем:

— Кто из вас продаст мне один «хан»* муки?

— Да ты откуда, любезный? — спросил его дядя Ованес.

— Из турецкой земли.

— Дядя Ованес, дядя Ованес! Ты бы его спросил, из какого он города, — полюбопытствовал один из сельчан.

— А, примерно сказать, как прозывается ваш город? — спросил дядя Ованес.

— Сиваз.

— Си-ва-аз! — растянувши таинственно, повторил дядя Ованес.

— Как он сказал, дядя Ованес?

— Сиваз!

— Па, чтоб твоего покойника собаки съели! — захлопав в ладоши, захохотало несколько сельчан.

— А оттуда до нас сколько же примерно месяцев дороги-то будет, приятель? — продолжал расспрашивать дядя Ованес.

— Три месяца.

— Пао! — единогласно воскликнули удивленные сельчане.

— Присядь-ка, любезный, присядь; откушаешь у нас чего-нибудь, — приглашал его дядя Ованес.

— Нет, спасибо: я тороплюсь, а вот кто из вас мне один хан муки продаст? — настаивал он.

— Эй, девки! — вынесите-ка один хан муки, — громко сказал в дверь дядя Ованес, — да и пополнее отмерьте хан-то. *

Одна из тех, к кому обращался дядя Ованес, вынесла хан муки и хотела его высыпать рабочему в мешок.

— А какая будет цена? — спросил рабочий.

— Да ты ссыпай в мешок-то!

— Нет, вперед надо цену узнать.

— Да ты ссыпай, — продолжал дядя Ованес, — а потом узнаешь: коли дорого будет — опорожнить недолго.

Рабочий раскрыл мешок, девка ссыпала муку и ушла.

— Сколько же дать? — спросил рабочий и из-за пазухи достал кошелек.

— Ничего не надо, любезный! Мы с пришельцев денег за хлеб не берем, мы наше добро за деньги не продаем. Кушай на здоровье! — сказал дядя Ованес и затянул свою трубку.

* «Хан» — местная мера (примеч. переводчика)

Рабочий немного смутился и хотя отнекивался, но так как торопился, поблагодарил несколько раз и ушел.

После ухода рабочего на минуту воцарилась тишина. Затем заговорил один из сельчан:

— Намедни тоже один пришел: мацони, говорит, хочу. Девки наши дали ему мацони. Он поел да и спрашивает: — Что стоит?

— Что, спрашиваю, стоит?

— Да мацони!

— А я ему: послушай, грек отстань, говорю, не каркай, не то иссякнет молоко у баранов.

— Да вы чему дивитесь? Разве в городе мацони не на деньги покупают?

— Коль за деньги,— значит и у нас будет за деньги, дивиться не будем!

— Тирацу!* — обратился ко мне дядя Несо, который впервые открыл планшиков.

— Что, дядя Несо? — отозвался я.

— Ну что, видишь? Не говорил я, что с этой машиной у нас все иначе пойдет: дали ему мацони поест, а он спрашивает, что, мол, стоит мацони — хочу заплатить!

— А как же иначе! А разве то хорошо, что всякого, кто придет — накорми, да напои даром! А ты знаешь ли в который это раз приходят? Вот и намедни я одному дал хан муки, — сердито заговорил младший брат дяди Ованеса.

— Если опять придет, опять дай, — приподняв голову, невозмутимо ответил дядя Ованес.

— Будь ты благословен! — заметили несколько стариков.

— Вот тебе и на! Они будут приходить сюда на заработки, а я им даром хлеба да яиц буду давать! Что ж, по-твоему, осел я, что-ли, для них?

— Да что ты, братец, что мы в долгу что ли ему? Нет, брат, теперь за всё деньги будем брать. Что бы ни захотели, сперва пусть заплатят. А кто без денег даст, чтоб ему ни дна ни покрывки, — заголосили сразу несколько сельчан вместе.

— А вы вот что, детки: не гневайте бога, чтоб не прекратилось довольство-то наше, — с грустью промолвил один из стариков, и начали спорить... Шум и гам усиливался...

Это было при начале работ по постройке тифлисско-карсской железнодорожной линии.

Перевод ЭЛН

(«Новое обозрение», 13 мая 1897 г., № 4591)

* Собственно — дьякон; так называет армянское простонародье всякого более или менее образованного, а главным образом — умеющего читать (примеч. переводчика).

2. 2. Թումանյանի «Ահա ուխտը» բանաստեղծության նախնական տարբերակը

1903 թ. Մոսկվայում Հե Ումանեցի և Առաքել Դերվիշի խմբագրությամբ լույս տեսավ «Современные армянские поэты» ժողովածուն, որի մեջ գետնիկված էին մեր մի շարք հայտնի հեղինակների շափածո գործերը ուսումնաստեղծների թարգմանությամբ: Գրքում զգալի տեղ է հատկացված նաև Թումանյանի պոեզիային. գետնիկված են «Այեր» պոեմը, «Անիծած հարսը», «Ախթամարը», «Համիրդը», «Քրիստոսն անապատում» և ուրիշ գործեր (բնագմներ՝ 19): Հետաքրքիր է, որ առաջին անգամ այս գրքում է հրապարակվել հուշակավոր «Հայոց վիշտը» բանաստեղծությունը՝ Ս. Գոլովաչևսկու թարգմանությամբ. բանաստեղծության հայերեն բնագիրը այդ ժամանակ դեռ չէր տպագրվել, այն հրապարակվեց միայն հինգ տարի անց՝ 1908 թ. «Գեղարվեստ» հանդեսում: Այս փաստը, ի դեպ, հիմք է տալիս հշտելու «Հայոց վիշտը» բանաստեղծության գրության թվականը: Ընդհատ է, ինքը՝ Թումանյանը 1916 թ. հրատարակած «Հայրենիքիս հետ» գրքում այդ բանաստեղծության տակ գրել է 1903, ըստ հրկույթին նկատի ունենալով նրա վերջնական հղկման ժամանակը: Իրականում, բանաստեղծությունը գրված է ամենաուշը 1902 թվականին, քանի որ «Современные армянские поэты» ժողովածուն գրաքննական թույլտվություն է ստացել 1902 թ. նոյեմբերի 6-ին: «Հայոց վիշտը» թարգմանությունը, ինչպես հատուկ նշված է վերնագրի տակ, կատարված է հեղինակի տրամադրած ձևագրից («С авторской рукописи»):

Զեռագրից է թարգմանված նաև Թումանյանի մեկ ուրիշ հայրենասիրական բանաստեղծություն, որը կոչվում է «Песня армян». Բերում ենք այդ բանաստեղծությունը՝ Հե Ումանեցի թարգմանությամբ.

Песня армян
(с авторской рукописи)

Идем, идем с далекого Востока,
От синих гор, где дальний небосклон,
Давно, давно, идем мы издалека,
Из тьмы веков, из сумрака времен...

Лилася кровь, как волны океана,
Текла рекой — из наших тяжких ран,
Страдали мы от зноя, от тумана,
Дышал в лицо угрюмый ураган...

Погибла ты, отчизна дорогая,
И знамя все истерзано в куски,—
Покоя нет, и нет родного края,
И бродим мы среди мрака и тоски...

Но мы идем, надеждою согреты,
Идем вперед, гонимы роком злым,
Святой огонь священного завета
В своей груди мы свято сохраним!...

Идем, идем... Наш путь лежит далеко,
Нас не страшат удары злой судьбы!

Идем, идем с далекого Востока
Мы, не боясь ни бури, ни борьбы!..

(«Современные армянские поэты». Под ред. Л. Уманца и А. Дервиша. Москва, 1903, էջ 43—44:

Մեր օրերում այս թարգմանությունը մտել է թումանյանի ուսուցիչի մի շարք ժողովածուների մեջ, ինչպես, օրինակ. Избранные сочинения. Ереван—Москва, Армгиз, 1950, էջ 57: Избранные произведения, М., Гослитиздат, 1952, էջ 47: Избранные сочинения, Е., Айпетрат, 1956, էջ 53: Стихотворения и поэмы, «Библиотека поэта», малая серия, Л., «Сов. писатель», 1958, էջ 87: Избранные произведения в 2 томах, М., Гослитиздат, 1960, т. 1, էջ 146:

Սակայն թումանյանի հայերեն և ո՛չ մի հրատարակության մեջ «Հայոց երգը» վերնագրով բանաստեղծություն չկա և հայտնի չէ: Ո՞րն է զաղտնիքը: Կարծում ենք, որ տվյալ դեպքում մեր առջև ոչ թե մի թարգմանություն է, որի բնագիրը կորել է, այլ թումանյանի «Մեր ուխտը» հայտնի բանաստեղծության նախնական տարբերակի թարգմանությունն է: Համբերկենում են երկու բանաստեղծությունների բնագրերի բովանդակությունը, տրամադրությունների և մտքերի բնթացքը, զեղարվեստական հիմնական հնարանքը (ժողովրդի հավաքական կերպարի անունից խոսելը) և մի շարք պատկերներ, որոնց նմանությունն ակնհայտ է՝ շնայած լեզուների տարբերությանը: Համեմատելու համար բերենք «Մեր ուխտի» լրիվ տեքստը.

Մենք ուխտ ունենք՝ միշտ զեպի լույս,
Ու գրնում ենք մեր ճամփով,
Մրրբիկներով պատած անհույս,
Սև խավարով, մութ ամպով:

Մենք անցել ենք արշան ծովն,
Սուր ենք տեսել ու կրրակ,
Մեր ճակատը դեմ ենք արել
Մրրբիկներին հակառակ:

Ու թեպետև պատառ-պատառ
Մեր դրոշմը սրբազան,
Ու մենք շունենք տեղ ու դադար—
Երկբից երկիր ցիրուցան.

Բայց գրնում ենք մենք անվեհեր
Ջարկերի տակ շար բախտի,
Մեր աչքերը միշտ զեպի վեր՝
Դեպի լույսը մեր ուխտի:

Ինչպես տեսնում ենք, նմանությունը դուրս է գալիս սովորական բնագրերի սահմաններից, որ կարող է լինել նույն բանաստեղծի տարբեր գործերի միջև, և երբեմն վերածվում է ուղղակի նույնության: Իսկ տարբերությունները հայերեն և ռուսերեն տեքստերի միջև առաջացել են, րոտ երկուցից, երկու պատճառով: Նախ՝ թարգմանիչը հավանաբար ազատ է վարվել տեքստի հետ, որոշ արտահայտություններ փոխել է կամ ավելացրել: Երկրորդ և ավելի

կարևոր պատճառն այն է, որ Թումանյանը հետադաշտում, բանաստեղծությունը հայերեն տպագրության հանձնելիս (1907) վերամշակել է, մասամբ կրճատել ու փոխել, մի բան, որն այնքան բնորոշ էր Թումանյանի աշխատանքի ոճի համար: Այս փաստը իրավունք է տալիս «Մեր ուխտի» գրության թվականը (գոնե նրա առաջին տարբերակին) նույնպես համարելու 1902-ը, թեև «Հայրենիքիս հետ» ժողովածուում այն ևս թվագրված է 1903:

Այսպիսով, «Моя армян»-ի թարգմանությունը պետք է դիտել իբրև «Մեր ուխտի» նախնական տարբերակ և ոչ առանձին բանաստեղծություն: Ահա թե ինչու սխալ է և՛ Ումանեցի այդ թարգմանությունը և «Մեր ուխտի» նոր թարգմանությունը (Մ. Պավլովայի) կողք-կողքի, իբրև երկու տարբեր բանաստեղծություններ զետեղելը, ինչպես արված է Թումանյանի երկերի նշված ռուսերեն ժողովածուներում:

5. Եղիշե Չառենցի նորահայտ հուլիսյան Թումանյանի մասին

«Խորհրդային Հայաստան» թերթի 1923 թ. մարտի 25-ի համարում առաջին անգամ հրապարակվել է Մոսկվայից ստացված ծանր բոթր՝ վախ անվեց Հովհաննես Թումանյանը. տպագրված է Մոսկվայից ուղարկված մի կարճ հնոսագիր և խմբագրական մի փոքրիկ հոդված, որը տալիս է Թումանյանի նամակում լսողին զնահատականը: Ահա այդ հոդվածն ամբողջությամբ.

«Հոգհանենա Թումանյան»

Ամսիս 23-ին, երեկոյան ժամը 9-ին, Մոսկվայում վախճանվել է մեր մեծագույն բանաստեղծը—Հով. Թումանյանը:

Ձի կարող լինել և ոչ մի սիրտ, որ խորին զառնությամբ ու թախիծով շարձադանքն այս մահաբոլի գուժին, և ի՞նչպես կարող է այդպես շարձադանքել իբր չկա մեղանում և ոչ մի դրագետ, որ մայրենի լեզուն սովորած չլինի Հով. Թումանյանի բանաստեղծություններից:

Սերունդներ են կրթվել մեր մեծ պոետի գործերով—և այդ գործերից շատ-շատերը այսօր և վաղը կրթելու են նորանոր սերունդներ: Որովհետև Հով. Թումանյանն է հնչեցրել բնազդուրկ աշխատավորության, չքավոր գյուղացու առաջին երգը—«Արի գութանը». չքավոր գյուղացու, աշխատավորի սրտից է խմել մեր մեծ պոետը իր զառն ու տխուր երգերը:

Հնի, նահապետական անցյալի մուկ ու մռայլ իրականության պատկերողն էր Հով. Թումանյանը, այն իրականության, որ արդեն սա՛նել է հավիտենության գիրկը: Եվ որքան մուկն ու աղետաբեր էր այդ աշխարհը աշխատավորի համար—այնքան էլ տխուր ու վշտալի էին մեր մեծ պոետի երկերը:

Աշխատավորության դասի գոյությունը թարգմանը լինելով հանդերձ՝ Հով. Թումանյանը իր գեղարվեստական բարձրարժեք երկերում հասցրել է մեր լեզուն անտեսանելի ճկունության, հաղորդել է նրան առնություն և ուժ, միշտ կենդանի է պահել դրական խոսքի կապը կյանքի ինքնաբերական աղբյուրներին: Մեր մեծ պոետի մահով մեռնում է վերջին մոհիկանը մեր ժողովրդական առույգ ու հյուսիսի բարբառի—և մեր գալիք դրականությունը յուստ բան ունի վերգոյնում Հով. Թումանյանի երկերի զանազանից:

Հանգիստ վաստակած աճյունիդ, աշխատավորի վշտի երգիչ և մայրենի լեզվի մեծագույն վարպետ: Հայաստանի աշխատավորությունը վառ կպահե քո

պայծառ հիշատակը իր սրտում և շնորհակալություն կհայտնի քո ասյրած զժվար աշխարհից իրեն ուղարկած իմաստուն պատգամի համար:

«Ապրե՛ք, երեխեք,
բայց մե՛զ պես չապրեք»:

Մ. Խմբ.— Խմբագրությունս «Պայքար»-ի հատուկ համարը կնվիրի մեծ բանաստեղծի օրերին և վաստակներին»:

Ո՛վ է եղել այս հոգվածի հեղինակը: Այս հարցը թերևս ավելորդ թվա-
հնարավոր է ճշտությամբ ուղղել թերթերի հին կոմպլեկտներում ցրված ան-
թիվ-սնահամար, անստորագիր նյութերի հեղինակների իսկությունը: Բայց այս
դեպքում կան տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս դրեթև առանց
տատանվելու ասել՝ հոգվածի հեղինակը Եղիշե Չարենցն է եղել: Մենք նկատի
ունենք այն մի քանի տեքստային նմանությունները, որ կան այս հոգվածի և
Թումանյանի մահվան առթիվ Ջարենցի գրած «Երկու աշխարհի սահմանա-
զծում» հոգվածի միջև: Վերջինս տպագրվեց մի քանի օր անց՝ «Խորհրդային
Հայաստանի» ամսագրի 3-ի համարում (№ 68), որը դրեթև ամբողջությամբ նվիր-
ված էր մեծ բանաստեղծի հիշատակին:

«Երկու աշխարհի սահմանազծում» հոգվածի սկիզբն ուղղակի արձագան-
քում է խմբագրականի այն խոսքերին, թե շուտով հատուկ համար է նվիրվելու
«մեծ բանաստեղծի օրերին և վաստակներին»: Չարենցը հայտարարում է, թե
«ներա օրերին ու վաստակներին նվիրված հոգված չէ», որ ինքն ուզում է գրել,
այլ «մի քանի հուշեր ու խորհրդածություններ» մեր պոեզիայի անցյալի մա-
սին:

Այնուհետև. խմբագրական հոգվածի այն խոսքերը, թե «հնի, նահապե-
տական անցյալի մոլի ու մոռյալ իրականության պատկերողն էր Հով. Թուման-
յանը», դրեթև նույնությամբ կրկնվում են «Երկու աշխարհի սահմանազծում»
հոգվածի մեջ. «Հնի, անցյալի, նահապետական գյուղի մոլի ու կախարդ կեն-
ցաղի կենդանի հայելին էր Թումանյանը»:

Հրապարակվող հոգվածն ավարտվում է՝ վկայակոչելով «Հին օրհնություն»
հայտնի խոսքերը. «Ապրե՛ք, երեխեք, բայց մե՛զ պես չապրեք»: «Երկու աշ-
խարհի սահմանազծում» հոգվածը նույնպես ավարտվում է այն խոսքերով,
թե ասպդա «երազուլ կյանքում» յիրականանա Թումանյանի ցանկությունը՝
«պիտի ասրեն «երեխեք», բայց «մեզ պես» չապրեն...»:

«Հանգիստ վաստակած աճյունիդ»,— Թումանյանի մասին ասված է հրա-
պարակվող հոգվածում: «Վաստակած» բնորոշումը Չարենցը սիրել է օգտա-
գործել Թումանյանի նկատմամբ. այդ բնորոշումը մենք գտնում ենք և՛ Թու-
մանյանին գրած 1923 թ. հունվարի 1-ի նամակում («Ձեր վաստակած և իմաս-
տուն կյանքին»), և՛ «Երկու աշխարհի սահմանազծում» հոգվածի մեջ («ամե-
նամեծը նրանցից, ամենավաստակյալը», «անցյալի վաստակյալ պոետներին»),
և՛ Թումանյանի հիշատակին նվիրված մեկ այլ «Եղբայրության շաղախը»
հոգվածում («Խորհրդային Հայաստան», 1923, 15 ամսագրի, № 77), որն ա-
վարտվում է այսպես. «Խորի՛ն հարզանք և անմոռանալի հիշատակ այդ վաս-
տակյալ աճյունին...»:

Կարելի է ուրիշ րնդհանրություններ էլ գտնել (նշենք, օրինակ, բայական
ասպունի երրորդ դեմքը «և» վերջավորությամբ կառուցելը,— կարձագանքն,

կպահէ, կհայտնէ և այլն...—որոշ բնորոշումներ բազմիցս կրկնելը, նույնիսկ յուրօրինակ կետադրութիւններ, որոնք հատուկ են Չարենցի գրկածինն: Սակայն այսքանն էլ բավական է Չարենցի՝ տվյալ հոգովածի հեղինակ լինելը ապացուցելու համար: Սրանք զուգահեռութիւններ են, որ սովորաբար երևան են գալիս, երբ հեղինակը նորից ու նորից վերադառնում է միևնույն հարցին կամ նույն անձնավորութեան բնութագրմանը:

Կարծում ենք, հրապարակվող նյութը պետք է մտցվի Չարենցի հոգովածների մեջ և լրացնի Թումանյանի մասին նրա բազմաթիվ արձակ ու շափածո էությունների շարքը, որոնք, միասին վերցրած, տալիս են մեր ազգային մեծագույն բանաստեղծի ամենավառ և խոր ղնահատականներից մեկը:

Է. ԶՐԱՇԱՆ,

ՄԻ ԿԱՐԵՎՈՐ ՓԱՍՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

1949 թ. Միքայել Նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուի երկրորդ հատորում գեղեզվել է «Հյուսիսափայլի» 1860 թ. № 11 տետրակից հանված մի նամակ Սարգիս Տեր-Միքայելյան Վարշամյանց ստորագրությամբ: Այդ առթիվ հատորի ծանոթագրությունների մեջ ասված է. «Նալբանդյանագետների ուշագրությունից վրիպել է աշս նամակի հեղինակի ուլ լինելու հարցը: Բավական է նորից նայել ստորագրությանը և քաղաքին, որտեղից ուղարկված է նամակը, համոզվելու համար, որ ստորագրությունը մտացածին է»: Ծանոթագրողի կարծիքով այդ ստորագրության տակ թաքնված է «Հյուսիսափայլի» փորձված աշխատակիցներից մեկը, անկասկած Միքայել Նալբանդյանը, քանի որ նամակի ընդհանուր շունչը, լեզուն, ոճը, տեղ-տեղ պոլիմեթրական ինքնատիպ, համարձակ դաստիարակությունները, խոստում են միայն Նալբանդյանի օգտին»¹: Այս եզրակացությունը տարիներ շարունակ ծառայել է իբրև Նալբանդյանի և Նազարյանի լեզվաբանական սկզբունքների տարբերությունների բացահայտող փաստարկ:

Տվյալների հանգամանալի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պարզելու, թե իրականում ո՞վ է եղել Սարգիս Տեր-Միքայելյան Վարշամյանցը, ի՞նչ առիթով է գրվել այդ նամակը և կարո՞ղ էր այն Մ. Նալբանդյանի գրչի արգասիքը լինել:

Սարգիս Տեր-Միքայելյան Վարշամյանցը 1860—1880-ական թթ. եղել է Բաքվի աչքի ընկնող հասարակական գործիչներից մեկը: 1855 թվականից ապրում էր Բաքվում: 1864 թ. մասնակցում է բժիշկ Գավիթ Ռոստոմյանի ջանքով կազմակերպված «Մարդասիրական ընկերության» հիմնադրմանը: 1868 թ. սկսած երկար տարիներ վարել է ընկերության ատենադպրի պաշտոնը: Մեզ հայտնի են երեք հոգովածները «Մշակում» (1870—1880-ական թթ.) և բացի դրանցից 1885 թ. տպագրած գիրքը՝ «Ներսես արքեպիսկոպոսի կաթողիկոսական ընտրությունը և այդ ընտրությանը մասնակցող պատգամավորի պաշտոնը» վերնագրով:

Ինչպես տեսնում ենք, Սարգիս Տեր-Միքայելյան Վարշամյանց ազգանունը մտացածին չէ: Այժմ պետք է քննել այն հանգամանքները, որոնք ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն տվյալ խնդրի պարզաբանման գործում:

¹ Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 434: